

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՂԱՐԶ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Քուվեյթի Պետության Կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),

նպատակ ունենալով բարենպաստ պայմաններ ստեղծել Կողմերի միջև տնտեսական համագործակցության զարգացման և, մասնավորապես, մի Պայմանավորվող կողմի տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից ներդրումների իրականացման համար,

ընդունելով, որ այսպիսի ներդրումների խրախուսումը և փոխադարձ պաշտպանությունը կնպաստեն գործարար նախաձեռնությունների խթանմանը և կբարձրացնեն երկու պետությունների բարգավաճման մակարդակը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար՝

1. «Ներդրում» եզրույթը նշանակում է՝ գույքի բոլոր տեսակները մի Պայմանավորվող կողմի տարածքում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինվում կամ ղեկավարվում են մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի կողմից և, մասնավորապես, սակայն ոչ բացառապես, ներառում են գույքի կամ իրավունքի հետևյալ ձևերը.

ա) բաժնետոմսեր, բաժնենմասերը և կապիտալի մասնակցության այլ ձևերը, պարտատոմսերը, բաժնետիրական ընկերության պարտատոմսերը և ընկերության մասնակցության այլ ձևերը, Պայմանավորվող կողմի ցանկացած ներդրողի կողմից թողարկված այլ պարտավորությունները, փոխառությունները և արժեթղթերը,

բ) տնտեսական արժեք ունեցող պայմանագրից բխող դրամական պահանջները և ցանկացած այլ գույքի կամ պարտավորության կատարման պահանջները,

գ) մտավոր սեփականության իրավունքները, ներառյալ, բայց ոչ բացառապես՝ հեղինակային իրավունքները, ապրուսեքանիշները, արտոնագրերը, արդյունաբերական նախագծերը և նմուշները, տեխնիկական գործընթացները, նոու-հաուն, առևտրային գաղտնիքները, առևտրային անվանումները և բարի համբավը,

դ) օրենքով, պայմանագրով կամ օրենքի համաձայն շնորհված ցանկացած արտոնագրով կամ թույլտվությամբ տրվող ցանկացած իրավունք, ներառյալ բնական պաշարների հետազոտման, ուսումնասիրության, արդյունահանման և օգտագործման իրավունքները և այլ տնտեսական կամ առևտրային գործունեություն իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու իրավունքները,

ե) ցանկացած այլ նյութական և ոչ նյութական, շարժական և անշարժ գույք և

առնչվող գույքային իրավունքները, ինչպես, օրինակ՝ վարձակալությունը, գույքի գրավը, գրավադրման իրավունքը և գրավը:

«Ներդրում» եզրույթը վերաբերում է նաև վերաներդրման նպատակով պահված «եկամուտներին» և «լուծարումից» ստացված գումարներին այս եզրույթների՝ ստորև բերված նշանակությամբ:

Գույքի և իրավունքների ներդրման կամ վերաներդրման ձևի փոփոխությունը չի ազդի դրանց որպես ներդրումների դիտարկմանը:

2. «Ներդրող» եզրույթը յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի առնչությամբ նշանակում է՝

ա) Քուվեյթի Պետության համար՝ այդ Պայմանավորվող կողմի Կառավարություն,

բ) ֆիզիկական անձ, որը, համաձայն Պայմանավորվող կողմի կիրառելի օրենսդրության, հանդիսանում է նրա քաղաքացին,

գ) իրավաբանական անձ, որը ստեղծվել կամ հիմնադրվել է Պայմանավորվող կողմի օրենսդրությանը և կանոններին համապատասխան, ինչպիսիք են հաստատությունները, զարգացման հիմնադրամները, գործակալությունները, հիմնադրամները և կանոնադրություն ունեցող այլ ձեռնարկություններ, մարմիններ և ընկերություններ:

3. «Ընկերություն» եզրույթը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ, շահույթ հետապնդող կամ չհետապնդող, մասնավոր կամ պետական հատվածի սեփականություն հանդիսացող կամ դրանց վերահսկողության ներքո գտնվող, որը հիմնադրվել է Պայմանավորվող կողմի օրենսդրության համապատասխան կամ տնօրինվում կամ փաստացի վերահսկվում է Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից և ներառում է կորպորացիաները, տրեստները, ընկերակցությունները, մասնաճյուղերը, համատեղ ձեռնարկությունները, ասոցիացիաները կամ մմանատիպ այլ կազմակերպություններ:

4. «Եկամուտներ» եզրույթը նշանակում է՝ ներդրումներից ստացված գումարներ՝ անկախ դրանց վճարման ձևից, և, մասնավորապես, բայց ոչ բացառապես, ներառում է եկամուտը, տոկոսը, կապիտալի աճը, շահաբաժինները, ռոյալթիները և ղեկավարման վարձատրությունը, տեխնիկական աջակցության կամ այլ վճարներ ու վարձատրություններ և բնեղենով վճարումներ՝ անկախ դրանց տեսակից:

5. «Լուծարում» եզրույթը նշանակում է՝ ներդրման լիակատար կամ մասնակի դադարեցման նպատակով կատարված ցանկացած գործողություն:

6. «Տարածք» եզրույթը նշանակում է՝

ա) Հայաստանի Հանրապետության համար՝ հողային տարածքը, ներքին ջրերը և օդային տարածությունը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն՝ իր գործող պետական օրենսդրության և միջազգային իրավունքի համաձայն,

բ) Քուվեյթի Պետության համար՝ Քուվեյթի Պետության տարածքը, ներառյալ նրա ծովային տարածքներին հարող ցանկացած տարածք, որը միջազգային իրավունքին համապատասխան՝ Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ համարվում կամ կարող է համարվել այնպիսի տարածք, որի նկատմամբ Պայմանավորվող կողմը կարող է ինքնիշխան իրավունքներ կամ իրավասություն իրականացնել:

7. «Ազատ փոխարկելի արժույթ» եզրույթը կնշանակի՝ ցանկացած արժույթ, որը Միջազգային արժութային հիմնադրամի կողմից ժամանակ առ ժամանակ սահմանվում է որպես ազատ փոխարկելի արժույթ՝ Միջազգային արժույթի հիմնադրամի համաձայնագրի հոդվածների և դրանում կատարված փոփոխությունների համաձայն:

8. «Առանց ուշացման» եզրույթը կնշանակի՝ այնպիսի ժամանակահատված, որը սովորաբար պահանջվում է վճարումների փոխանցումն իրականացնելու համար անհրաժեշտ ձևակերպումները ավարտելու համար: Նշված ժամանակահատվածը կսկսվի փոխանցման համար դիմումը ստանալու օրվանից և ոչ մի դեպքում չի կարող գերազանցել մեկ ամիսը:

Հոդված 2

Ներդրումների խրախուսումը և պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կխրախուսի ներդրումները և իր տարածքում բարենպաստ պայմաններ կստեղծի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից ներդրումներ կատարվելու համար և, իր օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքների համաձայն, կընդունի այդ ներդրումները:

2. Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պետք է ցանկացած ժամանակ ապահովվի արդար և հավասար վերաբերմունք, ինչպես նաև լիակատար պաշտպանություն և ապահովություն՝ համաձայն միջազգային իրավունքի ընդունված սկզբունքներին և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան եղանակով: Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չպետք է որևէ ձևով՝ անհիմն կամ խտրական միջոցներով, խոչընդոտի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների կառավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, իրականացմանը կամ տնօրինմանը մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների տարածքում: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կկատարի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների հանդեպ ստանձնած իր բոլոր պարտավորությունները և հանձնառությունները:

3. Հաստատումից հետո երկու Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները ենթակա չեն լրացուցիչ կատարողական այնպիսի պահանջների, որոնք կարող են վնաս հասցնել դրանց կենսունակությանը կամ բացասաբար անդրադառնալ դրանց օգտագործման, կառավարման, վարման, շահագործման, ընդլայնման, վաճառքի կամ այլ կերպ տնօրինման վրա:

Հոդված 3

Ներդրումների նկատմամբ ռեժիմը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից կատարված ներդրումների օգտագործման, կառավարման, վարման, շահագործման, ընդլայնման, վաճառքի կամ այլ կերպ տնօրինման նկատմամբ պետք է տրամադրի այնպիսի ռեժիմ, որը պետք է լինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը նման իրավիճակներում Կողմը տրամադրում է իր կամ երրորդ երկրի ներդրողներին՝ ընտրելով այդ ներդրումների համար ամենաբարենպաստ ռեժիմը:

2. Այնուամենայնիվ, սույն հոդվածի դրույթները չպետք է մեկնաբանվեն իբրև պարտավորեցնող մի Պայմանավորվող կողմին՝ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի նկատմամբ տարածել ցանկացած այնպիսի ռեժիմի, նախապատվության կամ արտոնության շահավետությունը, որն արդյունք է՝

ա) մաքսային միության, տնտեսական միության, ազատ առևտրի գոտու, արժույթա-

յին միութեան կամ տարածաշրջանային տնտեսական կարգավորումների որևէ այլ ձևի կամ նման այլ միջազգային համաձայնագրի, որի կողմ է հանդիսանում կամ կարող է դառնալ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը,

բ) ցանկացած միջազգային, տարածաշրջանային կամ երկկողմ համաձայնագրի կամ նման այլ համաձայնագրի կամ ցանկացած ներքին օրենսդրության, որն ամբողջովին կամ հիմնականում վերաբերում է հարկմանը:

Հոդված 4

Վնասների փոխհատուցում

1. Բացառությամբ 6-րդ հոդվածի կիրառման դեպքերի՝ եթե մի Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումները վնասներ են կրում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պատերազմի կամ այլ զինված հակամարտության, պետական արտակարգ իրավիճակների, հեղափոխության, քաղաքացիական խռովությունների, ապստամբության կամ նման այլ իրադարձությունների պատճառով, վերջինը նշված Պայմանավորվող կողմը կորուստների վերադարձման, փոխհատուցման, վնասի հատուցման կամ նման որևէ այլ կարգավորման մասով պետք է ներդրողին տրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը վերջինը նշված Պայմանավորվող կողմը տրամադրում է իր ներդրողներին կամ որևէ երրորդ կողմի ներդրողներին՝ ընտրելով ներդրողի համար ամենաբարենպաստ ռեժիմը:

2. Չխախտելով 1-ին կետի պայմանները՝ մի Պայմանավորվող կողմի ներդրողների համար, որոնք վնաս են կրում այդ կետում նշված իրադարձություններից որևէ մեկի պատճառով մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, ինչը հետևանք է՝

ա) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրա ներդրումների կամ դրանց մի մասի բռնագրավման,

բ) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից ներդրումների կամ դրանց մի մասի ոչնչացման, որը չի առաջացել զինված գործողությունների արդյունքում կամ չէր պահանջվում իրադրային անհրաժեշտությունից,

մյուս կողմն ապահովում է վնասների վերականգնումը կամ փոխհատուցումը, որը ցանկացած դեպքում պետք է կատարվի արագ, պատշաճ և արդյունավետ կերպով՝ կրած վնասների կամ կորուստների համար:

Հոդված 5

Սեփականագրկում կամ օտարում

1. ա) Մի Պայմանավորվող կողմի ներդրողների կատարած ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում չպետք է ազգայնացվեն, սեփականագրկվեն, օտարվեն կամ բռնագավթվեն կամ էլ ենթարկվեն ազգայնացմանը, սեփականագրկմանը, օտարմանը կամ բռնագավթմանը համարժեք՝ ուղղակի կամ անուղղակի գործողությունների (այսուհետ՝ միասնաբար՝ «սեփականագրկում և օտարում») մյուս Պայմանավորվող կողմի կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվում է հանրային նպատակներով՝ ելնելով այդ Պայմանավորվող կողմի ներքին կարիքներից՝ արագ, պատշաճ և արդյունավետ փոխհատուցման դիմաց և պայմանով, որ այդ միջոցառումները իրականացվում են անխտրականության հիման վրա և ընդհանուր կիրառության համապատասխան օրինական գործընթացների համաձայն:

բ) Այդ փոխհատուցումը պետք է համարժեք լինի սեփականագրված կամ օտարված ներդրումների փաստացի արժեքին և պետք է սահմանվի ու հաշվարկվի գնահատման միջազգայնորեն ընդունված սզբունքներին համապատասխան՝ օտարման իրականացման պահից անմիջապես առաջ կամ դրա հանրորեն հայտնի դառնալուց առաջ սեփականագրված կամ օտարված ներդրումների արդար շուկայական արժեքի հիման վրա՝ կախված նրանից, թե որն է ավելի վաղ տեղի ունեցել (այսուհետ՝ գնահատման օր): Այդ փոխհատուցումը պետք է հաշվարկվի ներդրողի կողմից ընտրված ազատ փոխարկելի արժույթով՝ գնահատման օրը այդ արժույթի փոխանակման համար գործող գերակայող շուկայական փոխարժեքի հիման վրա, և պետք է ներառի օտարման իրականացման պահից մինչև վճարման օրն ընկած ժամանակահատվածի համար շուկայում ձևավորված առևտրային տոկոսադրույքը, որը ամեն դեպքում չպետք է պակաս լինի, քան գերակայող ԼԻԲՈՐ-ի գործող տոկոսադրույքը կամ համարժեքը:

2. Հետագա որոշակիության համար սեփականագրվումը և օտարումը կներառի այնպիսի իրավիճակներ, երբ մի Պայմանավորվող կողմը սեփականագրվում կամ օտարում է իր տարածքում գործող օրենքներին համապատասխան կազմավորված կամ հիմնադրված ընկերության կամ ձեռնարկության գույքը, որում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողը ներդրում է կատարել, ներառյալ՝ բաժնետոմսերի, բաժնեմասերի, պարտատոմսերի կամ այլ իրավունքների կամ տոկոսների սեփականության միջոցով:

3. Սույն Համաձայնագրի նպատակների համար «սեփականագրվում և օտարում» եզրույթը կներառի նաև Պայմանավորվող կողմի միջամտությունները կամ կանոնակարգիչ միջոցառումները, որոնք ունեն de facto սեփականագրվման հետևանք, քանի որ դրանց արդյունքում ներդրողը փաստացի գրկվում է իր սեփականությունից, իր ներդրումների էական շահույթներից կամ դրանց վերահսկումից, կամ այնպիսի միջոցառումներ, որոնք կարող են դառնալ ներդրման տնտեսական արժեքի կորստի կամ վնասի պատճառ, ինչպես, օրինակ՝ ներդրման սառեցումը կամ արգելափակումը, ներդրման կամայական կամ ավելորդ հարկումը, ներդրման ամբողջությամբ կամ մասամբ վաճառքի հարկադրումը և նման այլ միջոցառումներ:

Հոդված 6

Ներդրումներին առնչվող վճարումների փոխանցում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է երաշխավորի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին ներդրումների և դրանց հետ կապված բոլոր վճարումների ազատ փոխանցումները դեպի իր տարածք և դրանից դուրս:

2.1-ին կետով նախատեսված փոխանցումները պետք է իրականացվեն առանց անհիմն ուշացումների կամ սահմանափակումների և, բացառությամբ բնեղենով վճարումների, ազատ փոխարկելի արժույթով: Պահանջվող փոխանցումները կատարելու ուշացման դեպքում տուժած ներդրողն իրավունք ունի ուշացման ժամանակահատվածի համար տոկոսներ ստանալու:

Հոդված 7

Սուրբոզացիա

1. Եթե մի Պայմանավորվող կողմը կամ նրա նշանակած գործակալությունը («Փոխհատուցող կողմ») վճարում է կատարում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում

(«Ընդունող Կողմ») կատարված ներդրումների առնչությամբ ստանձնած փոխհատուցման կամ երաշխավորման դիմաց, ապա Ընդունող կողմը ճանաչում է՝

ա) Փոխհատուցող կողմին այդ ներդրումից բխող բոլոր իրավունքների և պահանջների փոխանցումը՝ օրենքով կամ այլ իրավական գործառությանը,

բ) Փոխհատուցող կողմի իրավունքը՝ իրականացնել բոլոր այդ իրավունքները և կիրառել այդպիսի պահանջները և ստանձնել ներդրումների հետ կապված բոլոր պարտավորությունները սուբբոզագիայի իրավունքով:

2. Փոխհատուցող կողմին բոլոր հանգամանքներում պետք է տրամադրվի այն ռեժիմը, որը տրամադրվում է՝

ա) վերոնշյալ 1-ին կետում նշված փոխանցման իրավունքով ձեռք բերված իրավունքների ու պահանջների և ստանձնած պարտավորությունների նկատմամբ,

բ) ցանկացած վճարման նկատմամբ, որը ստացվել է՝ համաձայն այդ իրավունքների և պահանջների,

որը սկզբնապես ներդրողը լիազորված էր ստանալ, սույն Համաձայնագրին համապատասխան, տվյալ ներդրման նկատմամբ:

Հոդված 8

Պայմանավորվող կողմի և ներդրողի միջև վեճերի կարգավորումը

1. Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև ծագած վեճերը՝ կապված առաջինի տարածքում վերջինի կատարած ներդրմանը, պետք է հնարավորության սահմաններում կարգավորվեն բարեկամաբար:

2. Եթե նման վեճերը հնարավոր չէ կարգավորել վեճի կողմ հանդիսացող կողմերից ցանկացածի կողմից վեճը բարեկամաբար լուծելու վերաբերյալ մյուս կողմին գրավոր ծանուցում ուղարկելու օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կողմ հանդիսացող ներդրողի ընտրությամբ վեճը կարող է կարգավորվել հետևյալ եղանակներից մեկով՝

ա) վեճերի կարգավորման կիրառելի, նախապես համաձայնեցված ընթացակարգերին համապատասխան,

բ) միջազգային միջնորդ դատարանի միջոցով՝ սույն հոդվածի հաջորդ կետերի համաձայն:

3. Ներդրողի՝ վեճի կարգավորման հայցով միջազգային միջնորդ դատարան դիմելու դեպքում ներդրողը նաև պետք է տրամադրի իր գրավոր համաձայնությունը վեճը հետևյալ մարմիններից որևէ մեկին՝ ներկայացնելու վերաբերյալ՝

ա) 1) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (Կենտրոն), որը հիմնվել է Կողմերի և այլ Կողմերի քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման կոնվենցիայի համաձայն, որը ստորագրման համար բաց է 1965թ. մարտի 18-ից՝ Վաշինգտոնում (Վաշինգտոնյան կոնվենցիա), եթե երկու Պայմանավորվող կողմերն էլ հանդիսանում են Վաշինգտոնյան կոնվենցիայի կողմեր, և Վաշինգտոնյան կոնվենցիան կիրառելի է տվյալ վեճի կարգավորման համար,

2) Կենտրոն՝ ստեղծված Կենտրոնի քարտուղարության կողմից դատավարությունների կարգավորման նպատակով լրացուցիչ ծառայությունները կարգավորող կանոնների («Լրացուցիչ ծառայությունների կանոններ») համաձայն, եթե ներդրողի Պայմանավորվող կողմը կամ վեճի մյուս Պայմանավորվող կողմը, բայց ոչ երկուսը միասին, Վաշինգտոնյան կոնվենցիայի կողմ են հանդիսանում,

բ) միջազգային միջնորդ դատարան՝ հիմնված ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) Արբիտրաժային Կանոնների համաձայն («Կանոններ»)։ վեճի կողմերը կարող են փոփոխել այդ Կանոնները (Կանոնների 7-րդ հոդվածում նշված Նշանակող մարմին է հանդիսանում Կենտրոնի գլխավոր քարտուղարը),

գ) միջնորդ դատարան՝ վեճի կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ ընտրված միջնորդ կազմակերպության արբիտրաժային կանոնների հիման վրա ստեղծված։

4. Չնայած այն հանգամանքին, որ, 3-րդ կետի համաձայն, ներդրողը կարող է վեճի կարգավորման նպատակով դիմել միջնորդ դատարան, նա կարող է նախքան դատավարությունը սկսվելը կամ դատավարության ընթացքում վեճի կողմ հանդիսացող մյուս Պայմանավորվող կողմի դատական կամ վարչական տրիբունալներում հայցել ժամանակավոր դատական արգելք իր իրավունքների և շահերի պահպանման համար՝ բացառությամբ վնասի փոխհատուցման նպատակով վճարումների հայցերի։

5. Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև ներդրումային վեճի հետ կապված ցանկացած դատավարության ընթացքում, լինի դա իրավաբանական, միջնորդ կամ այլ կարգի, կամ դատավճիռ կամ որոշում իրականացնելիս Պայմանավորվող կողմը չպետք է որպես պաշտպանություն կիրառի իր ինքնիշխանության անձեռնմխելիությունը։ Ցանկացած հանդիպակաց հայց կամ փոխհատուցման իրավունք չի կարող հիմնված լինել այն փաստի վրա, որ տվյալ ներդրողը, ապահովագրական պայմանագրի համաձայն, ստացել է կամ պետք է ստանա որպես իր կրած վնասների մասնակի կամ ամբողջական փոխհատուցում կամ այլ տեսակի հատուցում ցանկացած երրորդ կողմից՝ լինի դա մասնավոր կամ պետական, ներառյալ մյուս Պայմանավորվող կողմը և նրա ենթակառուցվածքները, գործակալությունները կամ միջնորդ կազմակերպությունները։

Հոդված 9

Պայմանավորվող կողմերի միջև վեճերի կարգավորումը

1. Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը հնարավորության սահմաններում պետք է լուծեն բանակցությունների կամ դիվանագիտական այլ ուղիներով։

2. Եթե վեճը չի կարգավորվել Պայմանավորվող կողմի՝ նման բանակցությունների կամ այլ դիվանագիտական ուղիների համար դիմում ներկայացնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, և եթե Պայմանավորվող կողմերի միջև գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, գրավոր ծանուցելով մյուս Պայմանավորվող կողմին, վեճը կարող է ներկայացնել ad hoc միջնորդ դատարան՝ սույն հոդվածի հաջորդ կետերին համապատասխան։

3. Միջնորդ դատարանը կստեղծվի հետևյալ կերպով. յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նշանակի մեկ անդամի, և այս երկու անդամները պետք է համաձայնության գան երրորդ երկրի քաղաքացու մասին, որին երկու Պայմանավորվող կողմերը կնշանակեն որպես միջնորդ դատարանի Նախագահ։ Այդ անդամները պետք է նշանակվեն երկու ամսվա ընթացքում, իսկ Նախագահը՝ չորս ամսվա ընթացքում՝ միջնորդ դատարանին վեճի փոխանցման մասին Պայմանավորվող կողմի մտադրության մասին մյուս Պայմանավորվող կողմին տեղեկացնելու օրվանից սկսած։

4. Եթե վերոնշյալ 3-րդ կետում նշված ժամանակահատվածներում նշանակումներ չեն կատարվել, այլ պայմանավորվածությունների բացակայության դեպքում Պայմանավորվող կողմերից ցանկացածը հրավիրում է Արդարադատության միջազգային դատարանի նախագահին՝ անհրաժեշտ նշանակումները կատարելու համար: Եթե Արդարադատության միջազգային դատարանի նախագահը հանդիսանում է Պայմանավորվող կողմերից որևէ մեկի քաղաքացի, կամ եթե որևէ այլ պատճառով չի կարող իրականացնել նշված գործառույթը, ապա նշանակումները կատարելու համար հրավիրվում է Արդարադատության միջազգային դատարանի փոխնախագահը: Եթե Արդարադատության միջազգային դատարանի փոխնախագահը հանդիսանում է Պայմանավորվող կողմերից որևէ մեկի քաղաքացի, կամ եթե նա նույնպես որևէ պատճառով չի կարող իրականացնել նշված գործառույթը, ապա անհրաժեշտ նշանակումներն իրականացնելու համար հրավիրվում է Արդարադատության միջազգային դատարանի՝ պաշտոնակարգում հաջորդ անդամը, որը չի հանդիսանում Պայմանավորվող կողմերից որևէ մեկի քաղաքացի:

5. Միջնորդ դատարանի որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ: Այդ որոշումներն ընդունվում են սույն Համաձայնագրի և միջազգային իրավունքի ընդունված այն կանոնների համաձայն, որոնք կիրառելի, վերջնական և իրավապարտադիր են երկու Պայմանավորվող կողմերի համար: Դատարանի կայացրած վճիռները վերջնական և պարտադիր են Պայմանավորվող կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կրում է միջնորդ դատարանում իր կողմից նշանակված անդամի, ինչպես նաև միջնորդ դատավարությունում իր ներկայացուցչության ծախսերը: Դատարանի Նախագահի, ինչպես նաև դատական ընթացակարգերի իրականացման հետ կապված մյուս ծախսերը հավասարապես բաշխվում են Պայմանավորվող կողմերի միջև: Այնուամենայնիվ, միջնորդ դատարանը կարող է որոշել, որ ծախսերի ավելի մեծ մասը կրի Պայմանավորվող կողմերից մեկը: Բոլոր այլ դեպքերի համար միջնորդ դատարանը սահմանում է իր ընթացակարգը:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերի միջև հարաբերությունները

Սույն Համաձայնագրի դրույթները կիրառվում են՝ անկախ Պայմանավորվող կողմերի միջև դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների առկայությունից:

Հոդված 11

Այլ կանոնների կիրառումը

Եթե ներկա պահին կամ հետագայում միջազգային իրավունքով Պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունները՝ ի լրումն սույն Համաձայնագրի, պարունակում են կանոններ՝ ընդհանուր կամ հատուկ, որոնք մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումներին տրամադրում են առավել բարենպաստ ռեժիմ, քան նախատեսված է սույն Համաձայնագրով, ապա այդ կանոնները կգերակայեն սույն Համաձայնագրի նկատմամբ՝ այնքանով, որքանով դրանք ավելի բարենպաստ են ներդրողի համար:

Հոդված 12

Համաձայնագրի գործողության շրջանակը

Սույն Համաձայնագրի դրույթները կկիրառվեն բոլոր այն ներդրումների նկատ-

մամբ, որոնք գոյություն ունեն կամ կկատարվեն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահին կամ դրանից հետո որևէ Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում:

Հոդված 13

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուսին գրավոր ծանուցում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ սահմանադրական պահանջները կատարելու մասին, և Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին ծանուցման ստացման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

Հոդված 14

Տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա քսանհինգ (25) տարի ժամկետով և կշարունակի մնալ ուժի մեջ նույն ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով մինչև Համաձայնագրի սկզբնական կամ հերթական գործողության ժամկետը լրանալուց առնվազն մեկ տարի առաջ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը գրավոր ծանուցում ներկայացնի մյուս Պայմանավորվող կողմին այն դադարեցնելու իր մտադրության մասին:

2. Նախքան սույն Համաձայնագրի գործողության դադարեցման մասին ծանուցումն ուժի մեջ մտնելը կատարված ներդրումների նկատմամբ սույն Համաձայնագրի դրույթները կգործեն Համաձայնագրի դադարեցման օրվանից հետո հաջորդ տասնհինգ (15) տարիների ընթացքում:

Ի վկայումն որի՝ երկու Պայմանավորվող կողմերի համապատասխան լիազորված անձինք ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է 2010 թվականի հունիսի 25-ին, Երևան քաղաքում, որը համապատասխանում է 143.... Հ թվականի օրը, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2013թ. սեպտեմբերի 4-ին